ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

11հունիսի 2015 թվականի թիվ 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և ի կատարումն ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի մայիսի 18-ի թիվ 447-Ա հրամանի 4-րդ կետի՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում 2015 թվականի սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության գլխավոր ռազմական տեսչության կողմից անցկացվելիք ստուգման աշխատանքներին նախապատրաստվելու նպատակով հանձնարարել.

1. ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ, մարզային տարահանման հանձնաժողովի նախագահ Լ.Սարգսյանին՝

1) ճշգրտել մարզային տարահանման ու տարահանված բնակչության կենսաապահովման պլանները,

2) վերամշակել և վերախմբագրել մարզային տարահանման պլանը,

3) նախապատրաստել մարզային տարահանման մարմինները,

4) ճշգրտել ժամանակավոր տեղակայման կետերի (ԺՏԿ) և երկարատև բնակության կետերի (ԵԲԿ) մասին տվյալները,

5) մարզային տարահանման մարմինների անձնակազմին ծանոթացնել իրենց պարտականություններին,

6) ճշգրտել Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան և Բերդ քաղաքների տարահանման պլանները,

7) վերամշակել համայնքային ՔՊ պլանների 3.4.1 ենթակետը՝ <<Տարահանման կազմակերպումը>> համաձայն օրինակելի ձևերի պահանջների,

8) ճշգրտել <<Մարզի տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլան>>- ը,

9) միջոցներ ձեռնարկել տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը, ԺՏԿ (ԵԲԿ)-երի խնդիրները և գործառնական պարտականությունները կատարողներին հասցնելու համար,

10) ճշգրտել Իջևանի, Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջաններից մասնակի տարահանվողների ցուցակները,

11) նախապատրաստել Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան և Բերդ քաղաքների տարահանման (ընդունման) հավաքակայանների փաստաթղթերը և անձնակազմի հետ անցկացնել ուսումնական պարապմունք,

12) ճշգրտել Իջևանի, Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջանի կենսաապահովման հաշվարկները:

2. ՀՀ ՏԿ ԱԻՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Վ.Հովսեփյանին՝

1) կազմակերպել պլան-ժամանակացույցի միջոցառումների պատշաճ մակարդակով կատարումը,

2) ճշտել Տավուշի մարզային փրկարարական վարչության և ՀՀ ՊՆ ստորաբաժանումների միջև փոխգործողությունների պլանը,

3) ճշգրտել մարզի շչակների քանակը՝ ըստ համայնքների և ստուգել դրանց վիճակը,

4) ճշգրտել մարզի ՔՊ պլանը,

5) ճշգրտել <<Արտակարգ իրավիճակներում ՀՀ Տավուշի մարզի բնակչության պաշտպանության պլան>> - ը,

6) ճշգրտել և սահմանված կարգով ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ տնօրենի հաստատմանը ներկայացնել <<Տավուշի ՄՓՎ զորահամալրմամբ մարտական պատրաստականության բերման պլան>> - ը,

7) պլան-ժամանակացույցի միջոցառումների իրականացման համար յուրաքանչյուր ամսվա 15-ին ներկայացնել հաշվետվություն ՀՀ Տավուշի մարզպետին,

8) Տեսչական ստուգմանը պատրաստ լինելու մասին մինչև ս/թ օգոստոսի 15-ը զեկուցել ՀՀ Տավուշի մարզպետին:

3. Մարզային ՔՊ ծառայությունների պետերին՝

1) ճշգրտել մարզային ՔՊ ծառայությունների ՔՊ պլանները և կանոնադրությունները,

2) նախապատրաստել և պատրաստ վիճակում պահել ՀՀ Տավուշի մարզպետի պահեստային և կրկնորդ կառավարման կետերը - Գ.Բաղալյան

3) մշակել ՔՊ համակարգը պատրաստականության աշխատակարգի փոխադրման և այլ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ հրամանների և կարգադրությունների, ինչպես նաև միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցների ձևայնացված փաստաթղթեր և հաշվառման մատյաններ,

4) միջոցներ ձեռնարկել պետական սեփականություն չհանդիսացող գույքի, տրանսպորտային, ինժեներական և այլ հատուկ տեխնիկայի օգտագործման , ինչպես նաև պարենային և իրային ունեցվածքի, անհրաժեշտ վառելիքաքսուքային և անհրաժեշտ այլ նյութական արժեքների հետագա փոխհատուցման վերաբերյալ պայմանագրերի կնքման ուղղությամբ - Գ. Բաղալյան, Ռ. Ներսիսյան:

5) հետևողական աշխատանք տանել մարզի ղեկավար կազմի, համայնքների, կազմակերպությունների և ծառայությունների հետ ՔՊ ոլորտում իրենց գործառույթների և խնդիրների պարզաբանման ուղղությամբ,

6) մշակել և պլանում որպես հավելված ներառել զորահամալրման միջոցառումների նյութատեխնիկական ապահովման հարցերը - Ռ. Ներսիսյան,

7) հսկել համայնքի ղեկավարի որոշումների ընդունման գործընթացը՝ ՔՊ պլանի հաստատման, ՔՊ ծառայությունների, ՔՊ կազմավորումների, տարահանման հանձնաժողովի, տարահանման ԺՏԿ (ԵԲԿ)-եր ստեղծելու մասին,

8) ճշգրտել մարզի քաղաքային և սահմանամերձ 10կմ գոտու համայնքների կառավարման պահեստային կետերի առկայությունը և պատրաստվածությունը: Ապահովել առկա

կառավարման կետերի նախապատրաստումը տեսչական ստուգման (հնարավորության դեպքում): Առաջարկություններ ներկայացնել բացակայող կառավարման պահեստային կետերի ստեղծման և նախապատրաստման ուղղությամբ - Գ. Բաղալյան:

4. Համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին՝

1) մշակել ՔՊ համակարգը պատրաստականության աշխատակարգի փոխադրման և այլ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ հրամանների և կարգադրությունների, ինչպես նաև միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցների ձևայնացված փաստաթղթեր ու հաշվառման մատյաններ,

2) ճշգրտել մարզի ղեկավար կազմի, համայնքների, կազմակերպությունների և ծառայությունների ազդարարման սխեմաները,

3) հետևողական աշխատանք տանել մարզի ղեկավար կազմի, համայնքների, կազմակերպությունների և ծառայությունների հետ ՔՊ ոլորտում իրենց գործառույթների և խնդիրների պարզաբանման ուղղությամբ,

4) ճշգրտել մարզի ՔՊ կազմավորումների ստեղծման և գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերը (ստեղծման հրաման, անձնակազմի հաստիքացուցակ, անձնակազմի ազդարարման սխեմա, անձնակազմի՝ գույքով և սարքավորումներով հագեցվածության ու ամրակցված տրանսպորտային միջոցների մասին փաստաթղթեր),

5) ճշգրտել ժամանակավոր տեղակայման կետերի (ԺՏԿ) և երկարատև բնակության կետերի (ԵԲԿ) մասին տվյալները,

6) աշխատանքներ տանել մարզի համայնքների ՔՊ ծառայությունների պլանների և կանոնադրությունների սահմանված կարգով ճշգրտման ուղղությամբ - Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան և Բերդ քաղաքային համայնքների ղեկավարներ,

7) ճշգրտել Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան և Բերդ քաղաքների ՔՊ պլանները (հավելվածներով),

8) ճշգրտել Իջևանի, Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջանների գյուղական համայնքների ՔՊ պլանները (հավելվածներով),

9) ճշգրտել Իջևան քաղաքի ՔՊ ծառայությունների ՔՊ պլաններն (հավելվածներով) ու կանոնադրությունները - Վ. Ղալումյան,

10) միջոցներ ձեռնարկել համայնքային կառավարման կետերի և կառավարման մարմինների պատրաստականության բերման ուղղությամբ:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Լ. Սարգսյանի վրա:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ. հունիսի 11
Քաղաք Իջևան